ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

09 փետրվարի 2022 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Բագրատ Զաքարյանը, Արարատ Թումանյանը, Մարուսյա Հովհաննիսյանը, Արտուշ Մաթեվոսյանը, Մարյամ Միքաելյանը, Վերոնիկա Միքայելյանը, Արեվիկ Ստեփանյանը

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ բնակավայրերի վարչական ղեկավարներ Անդրանիկ Կարապետյանը, Հայկ Հովհաննիսյանը, Վլադիկ Գեվորգյանը, Արմեն Անտոնյանը, Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Խաչատուր Անդրեասյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժ/պ Աննա Նավասարդյանը:

ԼՍԵՑ - *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ N 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/ՁԵԿ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մինչև նիստի օրակարգի քվեարկության անցնելը ավագանու անդամ Արմեն Հայրապետյանն առաջարկեց նիստի օրակարգից հանել՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն 2022 թվականին օգտագործման, կառուցապատման իրավունքով տրամադրելու և օտարելու, հրապարակային սակարկությունների վարձավճարների և օտարման մեկնարկային գները հաստատելու մասին

2)2022 թվականին օտարման կամ օգտագործման տրամադրման ենթակա հողամասերի ցանկը հաստատելու մասին
5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին

օրակարգային հարցերը, քանի որ բացակայում էին մշտական հանձնաժողովների դրական եզրակացությունները:

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 9-ի N1 հերթական նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 1-ի N 59 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Լևիկ Հայրապետի Ստեփանյանին օտարելու մասին

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

<u>Որոշումն ընդունված է</u>

ԼՍԵՑ - ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 59 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ավագանու անդամ Արմեն Հայրապետյանը հետաքրքրվեց, թե ինչ սկզբունքով են ընտրված հանձնաժողովի կազմում նախապես ընդգրկված ավագանու անդամները:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Աննա Նավասարդյանը պարզաբանեց, որ ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով ավագանու անդամների մասնագիտական կարողությունները:

Ավագանու անդամ Արմեն Հայրապետյանը հանդես եկավ հարցի քվեարկությանը մասնակցելուց հրաժարվելու մասին հայտարարությամբ, քվորում չապահովելու պատճառով հարցը հանվեց քվեարկությունից:

<u>Որոշումը չի ընդունվել:</u>

ԼՍԵՑ - *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԼԵՎԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ավագանու անդամները օրակարգի նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունեին, առաջարկեցին առանց փոփոխությունների և լրացումների ընդունել այն:

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Լիճք գյուղի 4-րդ փողոց 26 հասցեում գտնվող 98,7 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,0455 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-039-0014-0076, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 19102021-09-0034 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Լևիկ Հայրապետի Ստեփանյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի ա) ենթակետերով սահմանված գներով.

1) Բնակելի տան համար 30 000 դրամ x 0,0563 x 98,7 քմ =166 704/ մեկ հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր չորս/ ՀՀ դրամ,

2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար 141,9 դրամ x 455 քմ = 64 565 /վաթսունչորս հազար հինգ հարյուր վաթսունհինգ / ՀՀ դրամ:
3)համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 18 500 (տասնութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

<u>Որոշումն ընդունված է</u>

ԼՍԵՑ - *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ավագանու անդամները օրակարգի նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունեին, առաջարկեցին առանց փոփոխությունների և լրացումների ընդունել այն:

ՈՐՈՇԵՑ - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի մարտի 7-ը՝ ժամը 15:00:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է

Ավագանու անդամներ

ՍՈՆԱ ԱԴԱՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄԱԼՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՇԱՀԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Խ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Աննա Նավասարդյան